ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 18 N 218-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ “ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.17 կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 958-Ն՝ որոշումը ***կարգադրում եմ***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ծաղկահովիտ համայնքի Հոկտեմբերյան 16 հասցեում գտնվող 189 քառ. մետր մակերես և 525.0 հազ. դրամ հաշվեկշռային սկզբնական արժեք ունեցող ավտոտնակները, 134.4 քառ. մետր մակերես և 230.0 հազ. դրամ հաշվեկշռային սկզբնական արժեք ունեցող կաթսայատունը, 397.15 քառ. մետր մակերես և 2,250.0 հազ. դրամ հաշվեկշռային սկզբնական արժեք ունեցող ինֆեկցիոն շենքը «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին հանձնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2017 թվականի դեկտեմբերի 18 N 218-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ “ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Դավայան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ - \հանձնաժողովի նախագահ\

Ա.Պետրոսյան - աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Ա. Ավետիսյան - աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Ա.Հակոբյան - աշխատակազմի հողաշինության-հողօգտագործման բաժնի, մարզային հողային պետական տեսչության պետ

Ա. Հակոբյան – “Ծաղկահովիտի առողջության կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ